


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ժր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Եւկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ժր.
Վեցամսեայ . . 7 "
ՍՄԵՐԻՈՒ
Տարեկան . 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻՍԻԿ


Դրանոց հետեւողը
20 ամսեայ



Լ Ր Ա Գ Ի

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Iraouvunk“

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրուիր

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ի

Ա. հատորը. իսկ Բ. հատորին՝ որ առաջինին գրեթէ կրկին մեծորիշեր կոչուեալ, մեծ մասը տպագրուած է.

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ 2 ՅՐԱՆՔ

Բ. հատորին յրանաչին վերջ գիւրդ պիտի աշխարհենք. թայց որոնք որ կանուխ եւ ածան տաւանայ կոչուեն, միւսեւ յառաջիկայ Յունուարի կէսը 2 ֆրանք մեզ դրկելու են, վստահ ըլլալով թէ Սառային հատորը անմիջապէս կը տաւանաւ եւ իւր աշխարհն ունի:

10 օրինակի դրամ դրկողը 11 օրինակ կը տաւանայ:

ՊԱՄԱՆՈՒՆՔԻ Ը. ՏԱՐԻՇԵՐՁԱՆԸ
1903

Իրաւունք այսօր իր եօթներորդ տարեշրջանը բոլորելով՝ կը թեւակոխէ իր ութերորդ տարեշրջանին մէջը:

Նոր տարւոյ սեմին վրայ աւելորդ կը համարինք նախորդ շրջանին մէջ մեր գործունէութեան մասին երկար բացատրութիւններ տալ մեր ընթերցողներուն, որոնք իրաւունքի հիմնարկութեան մէջեւ այսօր կը կը շարունակեն իրենց գտնահետազոտութեամբ մեզի մեր ձեռնարկին մէջ քաջալերել:

Փութանք գոնէ ըսելու թէ, ինչպէս շատ անգամներ արդէն կրկնած ենք, իրաւունք իրեն համար բացարձակ եւ տիրական սկզբունք ըրած է, ու պիտի շարունակէ ընել, կուտակեցական կամ դասակարգային ո՛րեւէ մարմնոյ մը ազդեցութենէն հեռի մնալը. այս մեկուսացումը իրեն թոյլ կուտայ, որ անկասկածէն, ազատօրէն, առանց ու եւ շահախնդրական թաղուն նպատակի, կարենայ իր կարծիքը յայտնել հանրային շահագրգռութիւն մը ներկայացնող ու եւ խնդրոյ նկատմամբ:

Ու ահա մեր այս սկզբունքին կատարեալ ճշգրտութեամբ ու յամուրթեամբ հաւատարմ մնալուս համար է որ, մեր անձին ու թերթին շուրջը համախմբեցինք հակառակորդներու այն մտիգնոմ վահմակը, որը յայտնի ու թագուն, խոստովանելի ու անխոստովանելի ամէն միջոցներով ընդունալն ջանաց մեզի խոշոր տ հանգիստանալ:

Խրախուսուած հանրութեան կողմէ մեր գտած համակրանքէն, մինք անողք հետապնդումով մը մերկացուցինք ու խայտառակեցինք կարգ մը այնպիսի ձեռնարկներ, որոնք բարեգործութեան, ազգասիրութեան շինք ու գիմակին տակ, յեղափոխութեան կեղծ չպարին ներքեւ կրնային հանրային բարեացակամութիւնը գուցէ պատրել: Ու անշուշտ մեզի չէր որ պիտի վիճակէր, աւելի երկարօրէն, աւելի մանրամասնօրէն ծանրանալ, մեր ուժին ու կարողութեան ներած չափովը, հանրային օգտակարութեան տեսակէտով մեր ունեցած դերին վրայ:

Նոր տարին աւթիւ մեր ընթերցողներուն ու համակրներուն մեր բարեմտղթութիւնները ներկայացնելով, կը բաւականանք ուրեմն ըսել թէ՛ նոյն ծրագրին վրայէն, գործունէութեան նոյն ուղիէն իրաւունք պիտի շարունակէ ընթանալ:

Մտադրած էինք թերթիս ծաւալը ընդարձակել, բայց ինչ ինչ

պատճառներով այժմ յետոճգեցինք. միայն յառաջիկայ շաբաթէն սկսեալ իրաւունք պիտի հրատարակուի մեծ մասամբ մանր տառով, որով թերթին պարունակութիւնը աւելի ճշտացած պիտի ըլլայ, բաժանորդագրութեան պայմանները անփոփոխ մնալով հանդերձ:

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՊՈՒԼԱՐԻԱ

ՍՕՖԻԱ, 26 Դեկտ.

Երէկ, Պուլկարաց Ծննդեան առաջին օրը, մեր քահանան, բացի Ս. Միտրօպօլիտէն եւ ուրիշ պաշտօնական անձերէ, այցելեց նաեւ նախարարացեալ Տր. Տանէվի: Նախարարացեալը հարցուց տէր հօր թէ համայն պուլկարահայոց կողմէ կը խօսէր: Ո՛չ դժբաղդաբար, պատասխանեց Տէր հայրը, միայն Սօֆիայի իմ հօտիս կողմէ: Նախարարացեալը հետեւեալը խօսեցուց:

Եթէ կարելի է, ձեր ձայնը լսելի ընել տայիք բոլոր Պուլկարիոյ մէջ գտնւող հայ ազգաբնակչութեան թէ, հայերը պուլկար կառավարութեան իրենց ցուցուցած բարեացակամութիւնը չարաչար կը գործածեն: շատ անգամ անվայել արարքներով եւ սին վէճերով կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն իրենց վրայ, եւ փոխանակ Պուլկարիոյ ասպնջականութենէն եւ ազատ օրէնքներէն օգտուելու, այնչափ առաջ գացին որ մինչեւ իսկ իրարու վրայ ատրճանակ կը պարպեն: սպանութիւններ տեղի կուենան, կոխներ կը լլան, որոնք մեզի տնտեսութիւնը կը պատճառեն: Թող ջանան հանդարտ եւ խղաղ ապրիլ եւ կառավարութիւնը ամեն տեսն իրենց բարեացակամ պիտի գտնուի:

Ահաւասիկ այս խօսքերը այսօր պուլկար կառավարութեան զեկը եւ իշխանութիւնը իր ձեռքին մէջ ունեցող նախարարացեալին դիտողութիւններն են, ուղղուած մեր ազգին, որոնք մեր բնութեան մէկ յոռի կողմը կը յատկանշեն. զանոնք ամեն հայ անհատի լուրջ խորհրդածութեանը կը ներկայացնեն:

Այս խօսքերը եւ դիտողու-

թիւնները որոնք շատ ճշմարիտ եւ արդարացի են եւ որոնք այժմ պաշտօնապէս մեզ կազդարարուին, մեզ համար խթան մը ըլլալու են գէթ ասկէ վերջ մեր հասարակական եւ յարաբերական առնչութիւններու մէջ շատ շրջահայեաց ըլլալու:

Չեմ փափաքիր հոս պարզել մեր ազգին զանազան հատուածներու եւ քաղաքներու մէջ տեղի ունեցած երբեմնի խռովութիւնները, անօգուտ եւ անհաս վէճերը, դժբաղդական, վտրժապետական, եկեղեցական անպատուաբեր կրուրտութիւնները, յեղափոխական անվայել պոռչտութիւնները եւ գոռում գոչումները եւ ուրիշ շատ անորակելի արարքներ, որոնց շատին համար կառավարութիւնը միջամտած է եւ շատ անգամ ալ մենք դիմած ենք անոր: Երբ 95—96ի դէպքերէն յետոյ գաղթականական հոսանքը յորդառատ դիմեց Պուլկարիս, մեզի համար նոր շրջան մը վերակաւ: Տեղային կառավարութիւնը դէպի մեզ խիստ լաւ տրամադրութիւններով օժտուած, առհասարակ ամեն կողմերէ դիւրութիւն, ընդունելութիւն եւ ասպնջականութիւն մեզի կը շաղկեր: Որչափ որ առաջէն փոքրաթիւ հայութիւն մը կը գտնուէր, բայց կարծես նորեկ գաղթականներով հայութիւնը նոր կազմ ու կերպարանք ստացաւ, ուշադրութեան արժանի նոր տարր մը հանդիսացաւ: Ու այդ նպաստաւոր հանգամանքներէն փոխանակ օգտուելու եւ Պուլկարիոյ ազատ հողին վրայ մեր ջլատուած ուժերը կազդուրելու, միջավայրին մեզ ընծալած ազատութենէն արբելու, սկսեցինք զիրար բզկտել եւ իրարու գլուխ պատռել: Ասոնք մեզի պատիւ չեն բերեր: Միխիթարական է սակայն ըսել թէ այժմ կիրքերը աւելի հանգարտած են. եւ փորձառութիւնը ու լուրջ գատողութիւնը մեզի սորվեցնելու են թէ պարտինք օտարին առջեւ մեր նկարագրին վատ կողմերը ծածկելու ջանալ: մեր ներքին խնդիրները, ինչ որ ալ ըլլան, չափաւորենք եւ մենք մեզի, մեր ազգային շրջանակին մէջ լուծենք: Անցեա-

լին դառն ճակատագրերը և ներկայիս տխուր կացութիւնը ամէն ժամանակեւ աւելի մեղի համոզելու են թէ պարտինք զիրար սիրել, իրարու հետ համերաշխ տարիլ, մէկգէկու թերթի ծածկել, մանաւանդ որ պանդուխտ ենք, օտար ենք, ամէն ազգերէ լքուած ենք, թափառական ու անօգնական ենք, տէր ու թիկունք չունինք, փրճակնիս ունէ՛ ասեմք աւելի ճակատագրական է և թէ այս պարագային, այս աղէտին զօրութեամբ պիտանուի մէջ իրարու հանդէպ եղբայրական ոգի և համակրական սէր չը տածենք, մեր թշուառութեանը մէջ ինչո՞վ կարելի է միմեարմութիւն գտնել: Մենք թէեւ ջանքնալից ենք և ցիրուցան, պատուութեան մէջ աշխուհի վայր պզտիկ աղջ չենք, մեր նկարագրին ազնուութիւնը, մեր բարոյական բարձրութիւնը, մեր առկուն ու յամու աշխատասիրութիւնը, մեր աղէտին վեհանձնութիւնը և տղատութեան ու քաղաքակրթութեան բարիքները վայելելու արժանի աղջ մը ջլլալնիս ինչո՞վ կարելի է իրար տածել:

— Միմիայն զիբար սիրելով և իրարու համերաշխ գտնելով:

ԱՐՄԵՆԱԿ

ԲՈՅ ՆԱՄԱԿ

ՊԱՏ. Կ. ԹԻՒՄԱՆՅԱՆԻ

Ստացանք ձեր երկայն հերքմանգիրը ի պատասխան Անանիսի հրապարակաւ յին ձաղկումին, որով ցոյց տալ կուզէր թէ՛ զուր հայ որբերը չափազործելու ուղի մը ընտրած էք ձեզ:

Անանիսի գրածը մէկ կողմ դնենք. բայց զուր ձեր հերքմանգիրին մէջ կը խոստովանիք թէ Պարսկաստանէն հոր բերուած ու Տ. Էդնս եանի պաշտպանութեանը ենթարկուած որբերը ես առնելու համար ամէն ճիգ թափած:

էք: Մինչդեռ ձեզմէ կը սպասուէր Տ. Էդնսեանի շնորհակալութեան նամակ մը ուղղել, որ 18 որբերու պաշտպանութիւնը ստանձնելու բարեբաղտութիւնը ունեցած է, և անմիջապէս զիմեյ անպաշտպան ուրիշ որբեր բերել տալու համար նոր միջոցներու:

Գալով այն 18 որբերու ճանապարհածախսին համար ձեր ետ պահանջած գրամին, ենթադրենք թէ այդ գրամը որբերը ցուցադրելով կամ անոնց մտաբանի ձեռ տալով չէք ճարած. հա՛նցեք բացատրել թէ, ինչ միջոցաւ և ինչ նպատակի համար այդ գրամը ձեր ձեռք աւելած է. չէ՞ որ կրկին հայ որբերու ի նպաստ հայ կամ օտար բարեբաղտելէ նախ ստացած էք, և ահա նոյն նպատակին ալ զործածուած է: Արդ, Տ. Էդնսեան ինչ պարտք ունի այդ գրամը ձեզ վերադարձնելու, երբ նա արդէն խոշոր պարտք մը կը ստանձնէ այն որբերուն պաշտպանութիւնը իր վրայ առնելով. որ ճանապարհի համար ձեր յախսածնէ քաշի մը պատիկ աւելի սուղի կը նստի իրեն:

Պատ. Թումանյան. մի վշտանա՛ք երբ քանք թէ ձեր այս անտեղի պահանջը և որբերը ետ խելու համար դատարանի դիմելը մեր մէջ յակամայն այն կարծիքը կը գոյացնեն թէ զուր որբեր պաշտպանելու անունին տակ տարբեր նպատակի մը կը ձգտենք:

Եթէ անկեղծ էք ձեր պաշտպանի դերին մէջ, փութացէ՛ք հայրենիքի փողոցները դիզելով հազարաւոր անպաշտպան որբերէն քանի մը հատ ալ բերել. եթէ կրկին ասոնց դէմ ալ էք նաեաններ կրկին, դուք ձեզ երջանիկ համարեցէք և ուրիշ եղէք որ պատճառ կըլլա՛ք հայ որբերու այդ կերպով պաշտպաններ գտնելուն:

ԻՐԱՆԻՈՒՆԻՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Մ. Խ. Սիլվէն. Բամնեգինը կանխիկ չվճարողը նոր բաժանորդ չենք նշանակել:

Տ. Յ. Պ. Կալաւս. — Ստացանք 8,50 Ֆրանքը:

Տ. Ճ. Ա. Բեռնեման. — Գ. Պ. անունով մէկը չենք ճանչնար հոտ. և մեզ քան մը չէ գրկուած ձեր հաշտոյն:

ՊՈՒԼԿԱՐԻՈՑ ԵՂԵՄՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

(Շար. Անիս Բիշեմ)

1879էն ի վեր, այսինքն իշխանապետութեան ծագումէն ի վեր Պուլկարիոյ ելեւմտացոյցներու քննութիւնը մեղի կը ցուցնէ որ հայնաւոր ծախքերը շարունակ աճած են: Ահա առժամանակեայ ելեւմտացոյցներուն համեմատ մինչեւ ներկայ տարւոյ ցուցակը:

Տարի	Ֆրանք	Տարի	Ֆրանք
1879	23,314,564	1891	80,478,700
1880	23,661,253	1892	88,248,070
1881	27,259,662	1893	89,369,334
1882	26,425,597	1894	102,720,982
1883	30,568,280	1895	89,849,425
1884	33,191,300	1896	91,143,910
1885	34,899,900	1897	83,425,019
1886	47,150,916	1898	84,487,975
1887	47,218,266	1899	83,887,286
1888	53,676,040	1900	83,270,370
1889	63,484,952	1901	96,065,900
1890	72,549,300	1902	98,898,337

Այս ցուցակին մէջ այլիք զանազակէտ մը կայ, այն է առաջին 15 տարիներու միջոցին ելեւմտական ծախքերու կարեւոր աճումը: Ամենէն առաջ 23,314,564 Ֆրանք էին. տասը տարի վերջը կը հասնին 53,676,040 Ֆրանքի: 1894ին Սթամպուլի վարչութեանէն տար, մինչեւ 102,720,982 Ֆրանք կելլալին, ամենէն բարձր թիւը, որուն երբեք հասած չեն ուրիշ տարիներ: Եթէ տարուած մէջ Սթամպուլի յաջորդած էր յաւելւածական և արտասովոր վարկի անունով 94 միլիոն 741,000 Ֆրանքի չափ խորի պիւտճէին մէջէն, միջին հշուով տարին 13 միլիոն: Դիզուած բացերը գոյելու համար ձեռք դարկաւ 1902ի փոխառութեան, որ հանրային շինութեանց սահմանուած էր, և 45 միլիոնը ինք տուաւ: Միջոցներ հայթաղելու համար իրեն, պուլկար կառավարութիւնը չափազանց արձաթ գրամ կոխեց 47 միլիոն, 3,300,000 բնակչի համար: Պուլկարիոյ Ազգային գրամատուեն ի զուր բողոքեց չափազանց արձաթ կոխելուն դէմ:

Սթամպուլի անկումին յաջորդող տարիները կառավարութիւնը չափաւորեց իր ծախքերը ու ջանաց քիչ մը կարող կանոն դնել ելեւմտից վարչութեան մէջ: Մինչեւ 1885, այսինքն հանրային պարտքը կազմուելէն առաջ պետութեան ծախքերը գրեթէ ամբողջովին ուղղակի աուրքերով կը գոյուէին: Բայց 1886էն սկսեալ շատ կածին ծախքերը և փոխառութեանց շրջանը կը բացուի: Ուր պիտի յանգի: 1895ին յանկարծ նուազելէ վերջը ելեւմտացոյցի ծախքերը հետզհետէ կրկին կածին և կը հասնին մինչեւ 99 միլիոնի: Երկրին հարկատու ու ժին ամենէն վերջին սահմանին հասած են: Երկիրը գրեթէ անկարող է 81 միլիոնէ աւելի հայթաղելու:

Վերջին երկու տարիները ծախքերուն շատաւոր անհաստատ պարտքին զանձին վրայ ճնշելուն պատճառաւ է: Հունքներու նուազութեան հետեւաւ շօք շատ անգամներ պէտք եղաւ արտասովոր ծախքեր հոգալ և ահա այսպէս պուլկար կառավարութիւնը այս տարի կարեւոր անհաստատ պարտքի մը առջեւ պտնուեցաւ, որուն բեր շատ ծանր էր գանձին և որոշեց փոխառութիւնով մը հաստատուն պարտքի վերածել:

Ինչպէս վերը կըլլիք, այս փոխառութիւնը չպիտի բարձրէ Պուլկարիոյ գրամական վիճակը, որ պիտի մնայ ինչ որ է այսօր: Ելեւմտացոյցը պիտի շարունակէ բաց թողալ, հանրային հարստութիւնը միեւնոյն վիճակի մէջ մնալ. քանի որ երկիրը դեռ շատ սոսնձամտփակ միջոցներ միայն ունի, և որքէն երեսուն պիտի գայ անհաստատ պարտքը: Քանի մը տարիէն պէտք պիտի ըլլայ ուրեմն կրկին հաստատ պարտքի վերածել և հետեւաբար նոր փոխառութեանց դիմել: Այս ստիպողական հարկին ենթարկուած են փոքր տէրութիւնները որոնք ինչպէս Պուլկարիոյ, Ռումանիա և Սերպիա, այնպիսի ծանր ծախքեր ունին, ու զայն չեն կրնար գոցել իրենց ճշմարտ հասոյթներով: Այս երեք տէրութիւնները, որոնք ամեն ժամանակ պատերազմական ծրագրեր ունին, միշտ ուզած են հզօր բանակ մը ունենալ:

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(43)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԻ

ԱՌԱՔԵՆ ԷՓԵՆՏԻՆ

— Ներքե՛ք, փայա էֆէնտի, որ բռն թէ չափազանց ցաւ դրոցի այդ տարակոյսներու ճակատամարտ, թոթովեց նենգալիտ մարդը: Դուք չափազանց զիտեք թէ տասը տարուան մէջ ինչ ծառայութիւններ մատուցած եմ երկրին ու կառավարութեան: Կրնամ խոստովանել թէ՛ օր մը չէ եղած որ իմ առած տեղեկագիրներս համաձայն չըլլան իրողութեանց, համաձայն չըլլան երկրին ու կառավարութեան շահերուն: Ասիկա կարող էք ստուգել: Հետեւաբար ձեր փնտմութեան առած տեղեկագիրս, որ ամիս մը առաջ գրուած էր, երբէ՛ք սխալ հիմք մը չունէր: Ես ինչ որ կըրցած էի խմանալ, որոշելու հոգին եղած էր: Ուրեմն ինչպէ՞ս պիտի խառնէի և կամ թէ պիտի համարձակէի խաբել ձեր փնտմութիւնը:

Վալի փաշան, որ նենգամտութեանը հետ կեղծ ծպիտ մի պատկերացնելու մէջ վարպետ էր, զլուր

չարժելով օտքի ելաւ ու Առաքել էֆէնտին ձեռքը բռնեց ու մրմնջեց.

— Մտիկ բռէ՛ք, Առաքել էֆէնտի, ես գիտեմ թէ դուք ճարպիկ էք, դուք երկրին ու կառավարութեան ծառայած էք, դուք միանգամայն մեր չափերը նկատի առնելով զործած էք այս տասը տարուան մէջ: Բայց պարագայ մը կայ. ըսել կուզեմ թէ՛ կրնայ ըլլալ որ անգիտակից էք ներկայ կառավարութեան:

— Ես, ընդհանրեց Առաքել էֆէնտին:

— Այո՛, դուք:

— Ամենեւին: Իմ աչքերուս առջեւէն բան մը չանցնիր: Ձեմ գովեր գիտ, բայց կը հաւատամ թէ կ. Պալիս ըլլալի, հիմակ մեծ մարդ մըն էի:

Վալի փաշա կարծես թէ այս վերջին խօսքերը չլսելու զարկաւ. ուստի խօսքը կտրելով՝ հարցուց.

— Ինչ կըաւ Վազգէն:

— Բանտարկուած է:

— Իրաւով թէ բանտարկուած է: Բայց խոստովանութիւնը...

— Դե՛մ խոստովանած չէ: Հարցաքննիչ-գնատաւորը կրտէ թէ «անդրդուելի կամք մը ու արտակարգ, համարեալ թիւն մը ունի»:

— Կը հաւատա՞ք թէ բռնի միջոցները պիտի կրնան աղղել անոր տնորդուելի կամքին վրայ:

— Ինչո՞ւ չէ:

— Խիստ լաւ. եթէ կտրելի է, անձամբ քննելու գաղտնիք չի: Եւ որպէս զի չկարնան ճանչնալ թէ դուք հայ մըն էք, փոխանակ բանտին մէջ կատարելու հարցաքննութիւնը, պաշտօնատուներ կը

դնեմ ձեր տրամադրութեան ներքեւ: Կրնո՞ւնիք:

Առաքել էֆէնտին, որ չէր սպասեր ասանկ անպարկուծեան մը, կեցած տեղը կարծես թէ արձան մը կարեցաւ ու ջանաց ինքզինքը զսպելու:

Օ՛հ, վալի փաշայի տուած պաշտօնը ծանր կուգար իրեն, որովհետեւ կանաքի վսեմ ձայն մը իր ականջին ըսած էր.

— «Դե՛մ, դաւաճան, բայց ձեռքերդ լուա՛...»:

— Ձե՛ք պատասխանե՛ք, շարունակեց վալի փաշա: Արդե՛ք չէք համարձակիր: Արդե՛ք կը վախճաք յանձն առնելու:

— Վախճալու բան մը չկայ, փաշա էֆէնտի... Թոթովեց Առաքել էֆէնտին՝ խղիւղով իր հոգեւոյն ճիշդ:

— Ուրեմն պիտի ընդունիք:

— Պիտի ընդունիմ...

— Աղէ՛կ. առէ՛ք այս երկու ոսկին. երբ ուզածիս պէս կատարէ՛ք ձեր հարցաքննութիւնը, պիտի ստանաք կտրիկ գումար մը զոր իմ կողմէս պիտի նուիրեմ:

Առաքել էֆէնտին զողողալով ձեռքը երկնցուց ու ընդունեց վալի փաշայի տուած երկու ոսկին և նայեցաւ անոր վրայ չունի մը պէս՝ որ իր տիրոջ մէն ոսկորի կտոր մը կատանայ:

— Վաղը կը սպասեմ ձեզի... վրայ բերաւ վալին՝ վստահաբար:

— Ձեր վստմութեան հրամանն ըլլա՛յ... չեչտեց Առաքել էֆէնտին ու մեկնեցաւ քիւն-նշան մը ընելով:

Դուրսը գեղեցիկ օդ մը կար: Կէս օրը երկու ժամ անցած էր: Այգեստանի լայն ու մաքուր փողոց-

Պուլկարիայ մէջ պատերազմական պիւտոնէն 20 միլիոն կը կլլէ։ Սերպիոյ մէջ այս պիւտոնէն 18 միլիոն է, իսկ Ռուսիոյ մէջ 58 միլիոն։ Պէտք չէ յուսալ թէ այս ծախքերը պիտի նը- ուազին, հակառակ այդ երկիրներէն իւրաքանչիւրին մէջ ընդդիմադիր կու- սակցութիւններու մղած պայքարին, որոնք իշխանութեան գլուխ անցնե- լնուն պէս՝ կը շարունակեն իրենց նա- խորդներուն սխալները։

(Շարունակելի) Գ. Թ.

ԻՍԼԱՄԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ ԱՌԵՒՈՂԱՒ

9.

Ինչ զգալիութիւն որ այսպիսի սերունդի մը զաւակները չկրցան ի- րենց հօրը պանծալի պաշտօնը շարու- նակել։ Լուսաւորութեան այն Ֆրան- սան՝ որ այնքան մեծ գործեր կատա- րած էր, ազատ մտածմունքի տիրա- պետութիւնը իր հոգին վրայ հաստա- տելու համար, եկաւ մեր երկիրնե- րուն մէջ զինուորը ըլլալու նոյն այն անսխալական եկեղեցիին, որուն գէժ ինքը կը մաքատէր։

Ու այս իր թէ ֆրանսական ազ- դեցութեան քաղաքականութեան ար- դիւնքը ինչ եղաւ։ Ձեր քարոզիչները, իրենց բովանդակ գիտութիւններովը, երբէք կարող եղա՞ն միասնականի մը իսկ հաւատքը փոխելու։ Ու ձեր բո- վանդակ գիտնադիտութեան յուսա- հատ ջանքերը կարող եղա՞ն արգիւիւ ամբողջ քրիստոնէայ ժողովուրդի մը կոտորածը, զոր ձեր քարոզիչներուն իսկ կրօնական յարձակումները զայն միասնական ժողովուրդներու հար կազմեալ զայրացումին նշանակ ըրեր էին։

Ուրիշ խնդիր, ալ աւելի ողբալի, հին անասան եկեղեցիներու հետ արգի մտածմունքին խզումը, զոր Ֆրանսա, հակառակ իր պատմական աւանդու- թեանցը, իրագործած էր այնքան ցա- ւալի զոհողութեանց պնով, միւսիւր-

ման աշխարհին մէջ Ֆրանսայի առջեւ կը բանար անբաղկատեղի մեծութեամբ դործունէութեան դաշտ մը։

Այսպիսի դիրքի մը առաւելութեանցը վրայ գաղափար մը ունենալու համար, կը բաւէ վայրկեան մը խորհրդածել մեր ընկերային գրութեան այն նշա- նակալից մասնաշատկութեանց վրայ, որոնց համաձայն իսլամութիւնը ոչ հայրենիք, ոչ ալ ազգութիւն ունի։

Ոչ մէկ նախընտրութիւն ունէ՞ցեղի ու ունէ՞ց հողի համար։

Մեր տիեզերական ազգայնութեանը համար միայն կայ միակ կապ մը. միակ Աստուծոյն պաշտամունքը։

Ոչ մէկ գերգաստանի համար երկ- նային ունէ՞ իրաւունք մը։

Իշխանութիւնը կը վերաբերի ամե- նէն իմաստունին, ամենէն առաքե- լիին ու ամենէն արդարին, զոր հա- լատագեաներու ձայնը կը սահմանէ։

Ընկերակցութեան այս յայտնի հիմով ու մեր անսպառ աւետարաններուն ա- զատ մեկնութեամբ, ոչինչ կարգի- լէր մեր բարձրագոյն ենթարկութիւնը գէպի ժողովուրդ մը, որուն դաւանած սկզբունքներուն մեծք ամենէն եւան- ղուն զինուորներն ենք։

Կաթողիկէ Ֆրանսան կրնար իր հողին վրայ իր նայրերուն սիրած պաշ- տամունքը գործադրել, ու աշխարհու- կան Ֆրանսան, առաքեալ մարդկային իրաւունքներու, ու բոլոր մարգարէ- ներու հեղինակութեամբը հովանաւոր- ուած, պիտի կրնար մեղի գալով պա- հանջել միակ Աստուծոյն պաշտող բո- լոր հարստահարեալները պաշտպանե- լու իրաւունքը. ու այն ատեն, փո- խանակ ափ մը քրիստոնէայ յա- ճախորդներու, զոր ձեր կոյր քա- ղաքականութիւնը բնաջնջումի դատա- պարտեց, նոր Ֆրանսան պիտի վայե- լէր հարիւր ժողովուրդներու խանդա- վառ գործակցութիւնը, որոնք իրենց աննուաճ հաւատքով գէպի նոյն Աստու- ծոյն ու արդարութեան կը խոյանան։

ՇԵՅՆ ԱՄՏԻԼ-ՀԱՔ ՊԱՆՏԱՏԻ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Դիւկո. 14ին վեհ կաթողիկոսը Տփղիսէ մեկնած է Լիւմիածին։

— Ռուսիոյ Եկատէրինտար քա- ղաքը բնակող երիտասարդ վաճա- ռական մը 7000 ռուպլի կտակեր է Գալիէթի Հայուհեաց Միացեալ ընկերութեան, իր Արարատականի գիւղերէն միոյն մէջ վարժարան մը հաստատէ։

— Տփղիսի քաղաքապետութեան նախագահ ընտրուած է Իշխան Ա. Մ. Խրկայնարազուկ-Արզուլ- Եան։

— Մոսկուայէ կը գրեն.

«Նկատուած է որ տարեց տարի շատուում է հայ օրիորդների թիւը, որոնք Մոսկուա են գալիս ձեռք բերելու բարձր ուսում կամ մի ունէ մասնագիտութիւն։ Մեծ մասամբ նրանք կողկասի քաղաք- ներից են նոր-նախիջեանից են»։

— Նոր-Գար ողբացեալ ի. Ժամ. հարեանի սպանութիւնը գուժող հե- ազիրները հրատարակելով, իւրմ. բազրութեան կողմէ կաւեցնէ սա տողերը. «Այս յոյժ տխրալի հե- առաքելը ստանալով, մենք մնացել են շուարած եւ չգիտենք թէ ինչ պէս բացատրենք այդ եղեւնա- գործութիւնը»։

— Տփղիսի մէջ կապրի 117 տա- րեկան հայ կին մը, Շուշան Հախ- վերտեան, որ իր 85 տարեկան զաւաճած աղջկան և իւր ապրուս- տը կը հոգայ մազեր մաքրելով և հին լաթեր կտրկտելով։

— Լիւքսեմբուրգի միւսիւր, Միսաս Չերուզ, իր թերթին հիմնարկու- թեամբ 15րդ տարեկարձին առ- թիւ, տկտրկելով Ռուսիոյ վերա- բերութեամբ հայ ժողովուրդին հե- տեւելիք քաղաքականութեան վրայ, կը գրէ։

նեքէն անցնելով ուղղակի կառավարութեան պաշ- տօնատունը մտաւ։ Հոն յայտնեց թէ վալի փաշայի հրամանով հարցաքննիչ կարգուած էր Կեմ գեղի ուսուցչին ու Պարսկաստանէն եկած վաղղէն անուն երիտասարդի մը վրայ... Յետոյ պաշտօնատունէն վերադառնալով իր տունը մտաւ։

Օրը մթնած էր։ Կիւրերը կը մտնեայր։ Առաքել էֆէնտին, ստանց սպասելու, առանց իր խղճին ձայնը լսելու, սենեակներէն մին առանձնացաւ ու կառավարութեան ստացած զինուորական համա- զգեստը հագաւ, սուրը կախեց ու համիտիէ ֆէսը դրաւ։

Գիշերուան ժամը երկուքին կառավարութեան պաշտօնատանը մէջ, կանաչ սեղանի մը քով, միա- միմակ նստած՝ սպասեց։

Քառորդի մը չափ սպասելէ ետքը, կաշիէ ծած- կողով գուռը բացուեցաւ ու անվահիր մարդ մը ներս մտաւ։

Այս մարդը Կեմի գեղի բանտարկուած ուսուցիչն էր։

Առաքել էֆէնտին պահ մը այդ յաղթ ու հսկայ կազմուածք ունեցող բանտարկեալին վրայ նայեցաւ ու ձայնը կեղծելով՝ հարցոյց.

- Բանի՞ օր է որ բանտարկուած էք։
- Ամիսէն աւելի, պատասխանեց ուսուցիչը։
- Ինչու համար արգարութիւնը չէք խոստովա- նիր որ ազատ արձակուիք։
- Իմ գիտցածներս խոստովանած են։
- Բայց չինձեռ են խոստովանութիւններդ։
- Ուրիշ ինչ կը պահանջուի ինձմէ։
- Ձեռնէ կը պահանջուի Պարսկաստանէն եկած ե-

րիտասարդին ո՛վ ըլլալը խոստովանելիդ։

— Այդ երիտասարդին գէշ կամ աղէկ մարդ ըլլալը յայտնի չէ ինձի. միայն թէ՛ իրիկուն մը գեղը ե- կաւ ու խնդրեց որ անկողին մը տայի իրեն, ու- թովհետեւ չէր կրնար մինչեւ քաղաքը քալել... ա՛լ ուժ չէր մնացեր վրան։

— Շատ լաւ. հարցուցի՞ր թէ ո՛ւր տեղացի էր ինքը։

- Հարցուցի։
- Ինչ քաւ։
- Ըսաւ թէ՛ քաղաքացի եմ։
- Յետոյ։
- Այդչա՞փ միայն։
- Չհարցուցի՞ր թէ ի՞նչ գաղափարի կը ծառայէ։
- Ինչ ըսեմ... մարդ մը որ «րնիկ քաղաքացի եմ ու տուն կը վերադառնամ» կըսէ ինձի, «ա՛լ ուրիշ ինչ գաղափարի կը ծառայես» կրնայի՞ հար- ցունել։

— Կեցէ՛ք. չէ՞ որ այդ երիտասարդը իր խոստո- վանութեանը մէջ յայտարարած է թէ՛ գօմիթաճի մըն է, ու նպատակն է եղեր տակնուվրայ դարձու- նել ամբողջ քաղաքը։

- Կարելի է բաժն ըլլայ. բայց այդ խօսքը ինչ կապ ունի իմ յանցապարտութեան հետ։
- Ի հա՛րկէ ուրի։
- Ինչպէս։
- Երբ կառավարութեան առջին կը յանգզնի ա- տանկ յայտարարութիւն մը ընելու, ինչպէս չկըր- նար ձեզի ըսել։
- Ո՛չ, բան մը չէ ըսած ինձի։
- Սուս կը խօսի՞ք... եւ այդ ստույթիւնն է որ

ձեր վիճակը կը ծանրացնէ։

— Երբէ՛ք չեմ ստեր։ Եւ եթէ գիտնամ որ կառա- վարութեան ուղած սուտը կրնայ զիս աղատել, առ ալ յանձն չեմ առնիր։

— Կառավարութեան համար ինչ օգուտ ունի սուտը, յիմա՞ր. ինչու առանկ չգիտցած խօսքեր կրնէք։ Միթէ՞ չէք գիտեր թէ ո՛ւր կը գտնուիք։

— Ուսուցիչը չպատասխանեց։ Մոմերու լուսին մէջ պատկերացուած այդ հրէշ զինուորականին վրայ նայեցաւ ու հոգիէն հառաջանք մը հանեց։

— Իմացածիս նայելով քաղաքացի ընտանիք մը ունիք, անանկ չէ՛, յարեց Առաքել էֆէնտին կեղծ ցուակցութեամբ մը։

- Ունիմ։
- Միթէ՞ չէք մեղքն ուր ընտանիքնիդ։
- Ձեռքէս ինչ կուգայ։

— Աչքերնուդ առջին բերէք կիւնդ, զաւակներդ ու թշուառ մայրդ՝ որ երկու օր առաջ պաշտօնա- տունն սեմերը գրեթէ արցունքով թրջեց. ան ա- տեն կրնաք որոշել թէ ինչ պէտք է ընել։

— Իմ որոշելիքս յայտնած եմ ու կը յայտնեմ։ Եթէ կախազանն ալ տանելու ըլլան, ասկից զատ բան մը չունիմ։ Գալով բնառնիքիս, զաւակներուս ու այս պաշտօնատունին սեմերը թրջող պառաւ մօրս, ատենք իրենց բոլոր թշուառութեան մէջ, զարձեալ անխիղճ չպիտի գտնուին ինչ պահանջե- լու որ ես զրպարտութիւններ ու մատնութիւններ ընեմ ասոր անոր վրայ՝ ինքզինքս ազատելու հա- մար։

(Շարունակելի)

